




Թ Ե Մ Ա Կ Ա Ն

ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ 125 ՏԱՐԵԿԱՆ

«Վայ Մեզի, Եթէ Հպարտանանք Միայն Անցեալով»...

Սոյն թուականի Դեկտ. 23ին՝ ուրբաթ, Իրաքահայ թեմը, հովանաւորութեամբ Ազգային Առաջնորդարանիս եւ կազմակերպութեամբ Առաջնորդարանիս առընթեր Հայ Եկեղեցասիրաց կազմի (Հ. Ե. Կ.) եւ Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյս «Զուարթնոց» Դպրաց Դասին, կը յիշատակէ եւ կը տօնախմբէ մեր ժողովուրդի մեծահանճար Վարդապետ եւ երաժիշտ՝ Կոմիտասի ծննդեան 125-ամեակը:

Տօնակատարութիւնը սկիզբ կադնէ առաւօտեան Ս. Պատարագով: Յընթացս Սրբոյ պատարագի, Հոգեհանգստեան յատուկ պաշտօն կը կատարուի նուիրում Մեծ Վարդապետի յիշատակին: Ապա՝ երեկոյեան ժամը 7ին տեղի կունենայ պաշտօնական հանդիսութիւն մը, ուր նախ Հ. Ե. Կ.ը հանդէս կու գայ գրական-գեղարուեստական բաժնով, անդրադառնալով Անոր կեանքին ու երաժշտական կենսագրութեան: Յաւարտ բաժնիս, «Զուարթնոց» դպրաց դասը հոգետր երգերու ելոյթով (Սրբազան համերգ—SACRED MUSIC), հանդիսականներուն կը ներկայացնէ Կոմիտաս Վրդ.ի կողմանէ դաշնաւորում եւ կամ մշակում որոշ հոգետր ստեղծագործութիւններ, որոնց կը յաջորդէ «MERRY CHRISTMAS քոյր եկեղեցիներուն» երգաշարը, որով, ինչպէս Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի ըսեր սոյն երեկոյին արտասանած իր խօսքին մէջ. «Մեր համերգին մէջ երգուեցան նաեւ օտար՝ Եւրոպական երգեր, այդ մեր եկեղեցոյ կողմէ MERRY CHRISTMAS ըսելու ձեւ մըն էր քոյր եկեղեցիներուն: Մենք մշտապէս մեծահոգութեամբ կը մօտենանք քոյր եկեղեցիներուն, հիմնուելով Քրիստոսաշաւիղ մէկ ընդհամօր եւ սիրաշաղախ եկեղեցոյ հիմունքներուն վրայ: Եւ իրենց Ս. Ծննդեան տօնին առթիւ կը մաղթենք լաւագոյնը, այն յուսով, որ իրենք եւս նոյն ոգիով տօգորում, իրենց բարեմաղթութիւնները պիտի կատարեն մեր եկեղեցոյ հանդէպ...»:

Համերգի ընթացքին կատարուեցան նաեւ այլ եկեղեցական-Ազգային երգեր, որոնք, առանց չափազանցութեան, արժանացան ներկաներուն բարձր գնահատանքին:

Հանդիսութեան ներկայ էին Պաղտատի հոգեւոր հովիւները, ի գլուխ ունենալով թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Ասազ Ս. Արքեպիսկոպոս Ասատուրեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան մեծաշարժ անդամները, Իրաքահայ թեմէս ներս գործող մշակութային միութիւններու վարչութեանց յարգարժան անդամները եւ մայրենի եկեղեցւոյս հարազատ զաւակները:

Ի լրումն համերգին Առաջնորդ Սրբազան Հայրը կուտայ իր հայրական բարձր օրհնութիւններն ու Ազնիւ բարեմաղթութիւնները բոլոր մասնակիցներուն եւ սիրեցեալ ներկաներուն, որմէ կուզէինք մէջ բերել որոշ հատուածներ. «Սիրելի Հարազատներ, Հայրենակիցներ եւ Արիւնակիցներ, «Բարի եւ հաւատարիմ ծառայ» կը կոչէ Յիսուս բոլոր անոնց որոնք կը գիտակցին՝ եւ գիտակցօրէն ալ իրենց տաղանդը ի գործ կը դնեն... բոլոր անոնք, որոնք գիտեն իրենց տաղանդը գործածել, բոլոր անոնք, որոնք գիտեն ծառայութեան արժեւորութիւնը, կը հասնին յաւերժամեծութեան: Այս է հիմքը քրիստոնէական կրօնքին:

Յիսուս խաչուեցաւ, ծառայութեան ճանապարհէն անցնելով եւ Յարութիւն առաւ, **որովհետեւ գիտցաւ ինչպէս խաչ բարձրանալ:** Մենք այսօր ուրիշ խաչ բարձրացողի գովքն է որ կատարեցինք... քիչ են այն անհատները, որոնք գիտցան խաչ բարձրանալու «Արուեստը», այո **Արուեստը...** Ամէն մարդ չի գիտեր եւ չի կրնար խաչ բարձրանալ եւ ամէն մարդ չի գիտեր եւ չի կրնար Յարութիւն առնել: Մենք այդպիսի Ազգ մը եղած ենք, վկան Կոմիտասի պէս հանճարները, որոնց շաւղին հետեւելով, տեսանք եւ ընկալեցինք **խաչ բարձրանալու, յաղթահարելու եւ ապա յառնելու** ճանապարհը:

Սիրելի հարազատներ,

Մեր պարտականութիւնն էր, անգամ մը եւս յիշատակել Կոմիտաս Վարդապետին, իր ծննդեան 125-ամեակին առթիւ... Պ. Սեւակ «Անլուելի Զանգակատուն» կոչեց մեծ Կոմիտասին... յիշաւի, Կոմիտաս «Անլուելի Զանգակատուն» է մեր Ազգին՝ **Յաւերժ հրաւեր մըն է Ան մեր զաւակներուն, նայելու, դիտելու, իրենց անցեալը, ներկան եւ փառաւոր ապագան...** Ահաւասիկ մեծութիւններ, որոնք պէտք չէ պատկանին միայն անցեալին: **Վայ մեզի եթէ հպարտանանք միայն անցեալով:** Վայ մեզի եթէ անցեալը չկապենք ներկային, ներկան՝ ապագային, որը երիտասարդներունն է, քանզի ապագան երիտասարդներունն է եւ երիտասարդներն են՝ ապագան...»:

Սրբազան Հայրը կը շարունակէ իր խօսքը, ուր շնորհակալութիւններ կը յայտնէ բոլոր ծնողներուն, որոնք իրենց զաւակները «մեզ կը վստահին եւ կը յանձնեն»: Եւ ապա նոր տարուայ շէմին կեցած կը մաղթէ մեր ժողովուրդի զաւակներուն, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, եւս առաւել մեծափայլ յաջողութիւններ ի կատարումն մեր ժողովուրդի փղձերուն եւ ի տիրացումն մեր **Արդար Իրաւունքներուն:** Սրբազան Հօր խօսքէն ետք դըպրաց դասը կը կատարէ Կոմիտասեան «Հայր Մեր»-ը եւ ապա ժողովուրդը կը մեկնի ի խաղաղութիւն Նորին Սրբազնութեան Օրհնաբեր արձակումով:

ՄԱԿԱՐ ԱԲՂ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ